


Young pay Sept 15/19

Running along  
Sept 15/19

1919

361.9  
4-43

MAR 2010



Ք Ա Ռ Ա Մ Ս Ե Ա Յ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

## ԿԵՍԱՐԻՈՑ. ԷՎԵՐԵԿԻ

ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ԿԱՐՕՏԵԼՈՑ ՅԱՆՉՆԱԻՈՒՄԲԻ



ԳԻՆԸ ԿԱՄԱԻՈՐ

ՏԳԳՐ. ՈՐ. ՍԱՆՃԱԳՃԵԱՆ

1919

361.9  
4-43

361.9  
4-43

Ք Ա Ռ Ա Մ Ս Ե Ա Յ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԿԵՍԱՐԻՈՅ. ԷՎԵՐԷԿԻ

ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ԿԱՐՕՏԵԼՈՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ



1919

ԳԻՆԸ ԿԱՄԱԻՈՐ

ՅԵ

ՅԵ

9695



բլլայ Պոլիս կամ այլուր, Յանձնաժողովին դժնդակ գործը ի գլուխ հանելու հարկ եղած կերպով սատարելէ ետք, աւելի լայն չափով իրենց մասնակցութիւնը բերին համազգային նպաստին, որով լիովին արդարացնելով իրենցմէ ակնկալուած յոյսը, Յանձնաժողովիս ալ պէտք չի ձգեցին մինչև հիմա Ազգ. իշխանութեանց և իր շրջանակէն դուրս ազգակիցներու օժանդակութեան դիմելու:

Այս առթիւ, մեր հայրենիքի բոլոր տարագրեալներու, այրիացած և որբացած թշուառ բեկորներու կողմէ Առժամեայ Յանձնաժողովս կուգայ իր խորին երախտագիտութիւնը և շնորհակալութիւնը յայտնել այն ազնիւ անձնաւորութիւններուն, որոնք նիւթական թէ բարոյական ամեն ձեռնտուութիւն ընծայեցին սփոփելու համար աղէտեալներու ծով ցաւերը, դիւրացնելով միանգամայն Յանձնաժողովիս ստանձնած դժնդակ գործը:

### ՔԱՌԱՄՍԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿԵՍԱՐԻՈՅ. ԷՎԷՐԷԿԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ԿԱՐՕՏԵԼՈՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄՔԻ

Կեսարիոյ եւ շրջակայից Պոլսերնակ կարգ մը ազգայիններու նախաձեռնութեամբ թերթերու միջոցաւ կատարուած հրաւերին պատասխանելով, բազմաթիւ հայրենակիցներ Տ. Յովնան Վրդ. Կարապետեանի նախազանութեան տակ ընդհանուր նիստ մը գումարեցին 1918 Դեկտ. 15ին Կէտիկ Փաշայի Ա. Մեքրոպեան վարժարանին սրահը:

Նախ, ժողովը կառավարելու համար առժամեայ դիւանի մը գոյութիւնը անհրաժեշտ նկատուելով, ձեռամբարձ քուէարկութեամբ ընտրուեցան Տեարք Թորոս Եսաեան՝ Ատենապետ և Յարութիւն Յովնանեան՝ Ատենաղաղի:

Դիւանի ընտրութիւնէն անմիջապէս յետոյ, ներկայ հայրենակիցներու յուզիչ կերպով բացաբուելով երկրին արգի վնասեցուցիչ կացութիւնը և վերապրողներու ողբալի վիճակը, կոչում եղաւ իրենց ցեղակցական և մարդասիրական ազնիւ զգացումներուն, որպէս զի առանց բոլոր մը կորսնցնելու, ի մի խմբուին եւ ձեռք ձեռքի օգնութեան փութան մահուան այնքան մօտիկը զերու մնացորդ բնակիչները: Նիստը շատ յուզիչ էր և ներկաներու պահանջին վրայ ձեռնարկուեցաւ անմիջական ընտրութեանը հանգանակիչ Մասնախումբի մը, որ պաշտօն ունենար կարելի չափով և արագօրէն օգնութիւն փութացնել հայրենիք:

Ուստի միաձայնութեամբ Յանձնաժողովոյ անդամ ընտրուեցան հետևեալ անձինքը.

- |                              |                      |
|------------------------------|----------------------|
| Տեարք Աբրահամ Աբէլեան        | Յակոբ Ալթըրբարմազեան |
| Տ. Արիստակէս քճ. Վարժապետեան | Յակոբ Գուլիսեան      |
| Աւետիս Կիւլպէնկեան           | Յակոբ Սիլվիճեան      |
| Կարապետ Տէօվլէթեան           | Յովհաննէս Աշուկեան   |
| Միհրան Էսէֆեան               | Պենոն Տէյրիմէնճեան   |
| Միհրան Օհանեան               | Սարգիս Քէչեան        |

Ստեփան Ստամալլըեան  
Մասնախումբի պաշտօնին կիրարկութեան ի դիւրութիւն՝ Ընդհ. ժողովոյ նոյն օրուան նիստին մէջ հինգ յօդուածներէ բաղկացեալ հետեւեալ հակիրճ ծրագիրը կամագրուելով՝ փոխալ ժողովոյ ենթարկուելէ ետք՝ նիստը փակուեցաւ ներկաներու անհուն ոգեւորութեան և խանդավառութեան մէջ:

### Ծ Ր Ա Գ Ի Ր

Յօդ. Ա. — Տարագրելոց և Ուղերու նպաստամատոյց Յանձնաժողովը Ընդհանուր Ժողովոյ մեծամասնութենէն ընտրուած 18 անձերէ կը բաղկանայ :

#### ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԻՐԱՎԱՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Յօդ. Բ. — Յանձնաժողովը իրաւատու է ընտրել իր մէջէն և ի հարկին դուրսէն յարմար նկատած նպաստաւոր և կամ նպաստամատոյց մարմիններ :

Յօդ. Գ. — Հանգանակուած դրամը յանձանձիկ և յարմար նկատած ձեւով բաշխել կաթնօտիչներու : Հանգանակութեան և յանձանձուով մասին իրենց միջեւ անհամաձայնութեան մը և կամ ո՛րէ է պատճառով հարկ տեսնուած պատգային իր դիւանի միջոցով հար նակիցները կոչով մը Ընդհ. Ժողովի հրահարել :

Յօդ. Դ. — Յիշեալ Երջաններու հոգեւոր պէտքին համար ալ ի հարկին նիւթական և բարոյական օժանդակութիւն տրամադրել :

Յօդ. Ե. — Ճիւղագրեալ յօդուածներու կիրարկութեան մէջ երբեք յարանուանական խտիր չի դնել :

Նորակազմ յանձնաժողովը նկատի ունենալով պարագաներու հրամայողական պահանջը Դեկտ. 18ին Այթբարձագեան խանի մէջ գումարելով իր նիստը միաձայնութեամբ իր դիւանը ընտրեց հետեւեալ կերպով .

|       |                    |           |
|-------|--------------------|-----------|
| Տեարք | Յակոբ Այթբարձագեան | Ատենապետ  |
|       | Յակոբ Գութնուհան   | Ատենադպիր |
|       | Մխիթան Էնէֆեան     | Գանձապետ  |

Յանձնաժողովոյ սոյն Ա. նիստին մէջ իսկ արագ գործունէութեան պէտքը շնչուելով որոշուեցաւ յաճախակի գնումարուելով ժամ առաջ հանգանակութեան ձեռնարկել, այնպէս որ իր հոսանքայ շրջանին մէջ 26 նիստեր ունեցած է և մէկ կողմէն նկատելով որ նուիրահաւանքութեան գործը ժամանակի կը կարօտի, իսկ միւս կողմէն գործին մլուժ տալու և ժամ առաջ ատալին նպաստը հասցնելու մտադրութեամբ ատալին առթիւ իսկ իր անդամներու միջեւ ստորագրեց 2590 սկիի գումար մը :

Ասոյն գումարը անմիջապէս իր տեղը հասցնելու համար ընականաբար Յանձնաժողովը պէտք տեսաւ տեղուին վրայ իր մասնաձիւղերը ունենալ, կազմուած ներկայանալի և վստահելի անձնաւորութիւններէ, սակայն միշտ աչքի առջեւ ունենալով արագ գործելու նշանաբանը մինչեւ գործին հաստատ հիման վրայ դրուելը, արժանահատ անձերու վկայութեանց վրայ յենլով յիշեալ գումարը մաս առ մաս ճամբայ Բանեց կեսարիոյ ամենավստահելի ճանչուած Պատ. Սանատրուկ Շանլեանի և Պ. Մելիքօֆ Գիւրլուշեանի հասցէէն և հրահանգ առաւ յիշեալներուն որ պատշաճ դատուած եղանակով առժամաբար դարման տանին առաջին առիթով ներկայացող թշուառներու անհրաժեշտ կարիքներուն :

Յանձնաժողովը, առանց յապաղման, մէկ կողմէն փութաց յառաջ տանիլ

ձեռնարկած գործը և նիստերէն մէկուն մէջ, նպատակ ունենալով տեղւոյն ռայ մասնաձիւղերու կազմութիւնը, որ անհրաժեշտ կը նկատուէր ժամանակը նշորակը բուն վէլքին, երկու շրջանակի բաժնեց երկրին կազմութեան գործը : Ա. Կեսարիա, Քալաթ և բրտրութք Բ. Էվերէկ և Դակայք :

Այս հիման վրայ, կազմակերպական հրահանգներ ուղարկելով յիշեալ այրերու մէջ ծանօթ անձնաւորութիւններու հասցէին բարեբաղչութիւնը Բանեց սուղ ժամանակի մէջ նպաստաւոր պատասխանները ընդունելու իրենց մէջ մեր երկրացիները իրենց կարգին արդէն կազմ և ընդունակ եղած ռաւէրին, անմիջակամբէն կազմած էին իրենց Մարմինները և տեղեկագրած Յանձնաժողովին :

Կեսարիոյ մէջ Մասնախումբի անդամներու ցանկը թէպէտև ունինք ձեռին, սակայն տեղւոյն անպահովութեան երեսն գաղթականութեան առած սկայ քայլերուն շնորհիւ յիշեալ ցանկին մէջ կարգ մը փոփոխութիւններ յատարուած ըլլալով (Իրենց մէջ կը յիշուին Տեարք Արշակ Մոսկոֆեան, Յարութիւն Գանսիլեան, Յովսէփ Ապահան և Սահակ Գազաղեան) ամենալեւջին ցանկը կը ներկայացնենք հոս մեր ընթերցողներուն :

#### Կեսարիոյ, Թալասու եւ Երջակայից Մասնաձիւղի անդամները

|       |                |             |              |
|-------|----------------|-------------|--------------|
| Տեարք | Տօքթ. Սարգիս   | Գալթաքեան   | Ս. Ատենապետ  |
|       | Համարձում      | Մայխանեան   | Բ. Ատենապետ  |
|       | Առաքել         | Գալթեան     | Ա. Ատենադպիր |
|       | Բենիամին       | Գրլըճճեան   | Բ. Ատենադպիր |
|       | Մելիքօֆ        | Կիւրլուշեան | Գանձապետ     |
|       | Կարապետ        | Թաճեան      | Ունդամ       |
|       | »              | Բաղախեան    | »            |
|       | Միսաք          | Գազաղեան    | »            |
|       | Ե. Յովսէփ      | Տաղլարեան   | »            |
|       | Պատ. Սանատրուկ | Շանլեան     | »            |
|       | Սարգիս         | Թալասլեան   | »            |
|       | Պատ. Վահրամ    | Թահմիզեան   | »            |

#### Էվերէկ-Ֆէնէսէի եւ Երջակայից Մասնաձիւղի անդամները

|       |           |                  |              |
|-------|-----------|------------------|--------------|
| Տեարք | Թորոս     | Գալթեան          | Ա. Ատենապետ  |
|       | Կարապետ   | Միխանեան         | Բ. Ատենապետ  |
|       | Աղբակ     | Գարակէօղեան      | Ա. Ատենադպիր |
|       | Յարութիւն | Մելիքեան         | Գ. Ատենադպիր |
|       | Մերկերիոս | Աչուկեան         | Գանձապետ     |
|       | Ա.        | Բաղախեան         | Ունդամ       |
|       | Գալուստ   | Յակոբեան         | »            |
|       | Հայկազուն | Յակոբեան         | »            |
|       | Ղազար     | Օղլաղեան         | »            |
|       | Յակոբ     | Ուզունկարապետեան | »            |

|       |            |              |       |
|-------|------------|--------------|-------|
| Տեարք | Յարուսթիւն | Թաշգարութեան | Անդամ |
| »     | Փիլիպոս    | Միւթէվէլլեան | »     |
| Տիկին | Լուսիկ     | Քէօլէեան     | »     |

Յանձնախումբը իր գործունէութեան շրջանակը աւելի եւս ընդլայնելու ջանքով, նոյնպէս դիմում րբաւ Զմիւռնիաքնակ հայրենակիցներու և հոն իր խնդրանքին վրայ, տեղւոյն հայրենակիցները ևս գնահատելի նախաձեռնարկութիւնը ունեցան կազմելու մասնաճիւղ մը, որոշ չափով մասնակցելով նպաստի գործին:

**Զմիւռնիոյ Մասնաճիւղի անդամները**

|         |              |            |
|---------|--------------|------------|
| Արթաքի  | Գալիաքճեան   | Ատենապետ   |
| Պետրոս  | Յովնանեան    | Ատենադպիր  |
| Սեդրակ  | Կիւրիւնլեան  | Գանձապետ   |
| Կարապետ | Թի. ֆէնկճեան | Խորհրդական |
| Զաքարիա | Աւետիքեան    | »          |
| Միհրան  | Սաղըրեան     | »          |
| Տիգրան  | Տօնիկեան     | »          |

Ասկէ զատ՝ ուրախառիթ է բոլոր թէ իզմիրի «Հայ Տարագրեալներու և անոնց որրերու Նպաստամատոյց Յանձնաժողովը» որ զուտ տեղական հանգամանք ունի, աշնուօրէն և ազգասիրաբար գովելի փութաջանութիւնը ունեցաւ մեր գործին սատարելու 2000 ոսկի տրամադրելով Ազնուուհի Օր. Երկանեանի միջոցով մեր որբերէն 100 պատուարեւոյն հոգը ստանձնելու համար: Այժմ յիշեալ Օրիորդը Կիւարիա կը գտնուի, և իրեն տրամադրուած նոյն գրամով գոհացուցիչ պայմաններու տակ կը պահէ առ այժմ 27 որբեր, ինչպէս կը տեղեկագրէ մեզի զրկուած Մարտ 15ի տեղեկագիրը:

Այս տողերը հրատարակուած պահուն Զմիւռնիոյ Մասնաճիւղէն ստացանք նամակ մը, որուն մէջ կը տեղեկացուի թէ վերոյիշեալ Նպաստամատոյց յանձնաժողովը իր զրկած 2000 ոսկիէն զատ, կրկին 2000 ոսկի եւս ուղարկած է Օր. Երկանեանի հասցէին, միանգամայն հրահանգ տուած որ յիշեալ Օրիորդը իր ձեռքին տակ ունեցած բոլոր գրամները տեղւոյն Որբախնամին փոխանցելով ինքը վերադառնայ իզմիր, իր մօր կանխահաս մահուան պատճառաւ:

Այսպէս, յանձնաժողովը իրեն նուիրական պարտք համարելով, իրեն վստահուած ծանր գործը գոհացուցիչ կերպով ի կատար հանելու համար կարելի ջանքերը ի գործ դնել և իրովսանն բացի բարոյական յանձնառութիւն, նիւթակահաւոյցն ալ առաջին օրինակը տալէ ետք, սրտի անհուն գոհունակութեամբ բազմը ունեցաւ ողջունելու ամէն կողմէ տեղացող անձնուէր աջակցութիւնները եւ առաջին քայլերուն իսկ պսակուած գտաւ իր սկսած գործին գնահատութիւնը, իբրև սոյնդանի տարաբաղդ հայրենակիցներու շարուտ վերջերուն:

Այս միջոցին էր որ Յանձնաժողովը տխուր անակնկալի մը առջև կը զբառնէր ինքզինքը, ուղարկուած առաջին նպաստը տակաւին Կեսարիա չի հասած:

տեղեկութիւն կը տրուէր թէ մինչև այն օրը զանազան վայրերէ փախստական եկած ինկած հայ որբուկներու փաղանգ մը թուրք Որբանոցէն կը յանձնուէր տեղւոյն վրայ անուանաւորու կարգ մը ակնաւարներու, որպէս զի այսուհետ իրենք հոգան անոնց պէտքերը իրենց սեփական միջոցներով, միանգամայն վերադարձնելով նախկին կառավարութեան կողմէ գրաւուած ազգապատկան կալուածները, որպէս զի պայմանագրութեանց լրանալէն յետոյ նոյն կալուածներու եկամուտները իրենք գանձեն: Նշանակելի և ցաւառիթ պարագայ մը որ կար, թուրք Որբանոցի 500 որբերէն միւրայն 2500-ը յանձնուին մեր ազգայիններուն, մինչ մնացեալները տարաբաղդաբար զօճ գացած են զանազան փառերու, փրկութեան հանգրուանը չի հասած:

Այս օր և կոկոնցուցիչ կարիքին հանդէպ Յանձնաժողովը ուրիշ միջոց չունէր, այլ արագ գործունէութեան մը շնորհիւ յառաջ ասանի նպաստահաւաքութեան գործը, միանգամայն հրահանգ տալով Կեսարիոյ իր մասնաճիւղէն որ անմիջապէս խնամէ յիշեալ որբուկները ազգապատկան շէնքի մը մէջ և որ կարկին ի գործ դնէ սպրեցնելու համար այդ խեղճուկները, մինչև որ նպաստները հասնին հետգհետ և նուիրական գործը ստանայ կանոնաւոր վիճակ մը:

Նուիրահաւաքութիւնը աւելի արդիւնաւոր դարձնելու համար, Յանձնաժողովը նոյն գործին համար Պոլսերնակ Էվէրէկ-Ֆէնէսէցիներէ և Թալասցի-ժողովը նոյն գործին համար Պոլսերնակ Էվէրէկ-Ֆէնէսէցիներէ և Թալասցի-իրեն օժանդակ երկու մարմիններ ընտրեց, որոնք իրենց կարգին ոչ նուազ արդիւնքներ ձեռք բերին, սիրայօժար իրենց աջակցութիւնը ընձայելով Յանձնախումբին:

**Պոլսերնակ Էվէրէկ-Ֆէնէսէցիներու Օժանդակ մարմին**

|        |         |               |           |
|--------|---------|---------------|-----------|
| Տեարք՝ | Միհրան  | Փիլաւեան      | Ատենապետ  |
|        | Արիկ    | Գալիաեան      | Ատենադպիր |
|        | Հայկ    | Ալթըրարմագեան | Գանձապետ  |
|        | Մասին   | Թորոսեան      | Համարակալ |
|        | Գրիգոր  | Պարսամեան     | Անդամ     |
|        | Կարապետ | Բէշիշեան      | »         |
|        | Մինաս   | Ստեփանեան     | »         |
|        | Ռուբէն  | Եուսուֆեան    | »         |

**Պոլսերնակ Թալասցիներու Օժանդակ մարմին**

|        |           |                |           |
|--------|-----------|----------------|-----------|
| Տեարք՝ | Հայկազուն | Ա. Կիւլպէնկեան | Ատենապետ  |
|        | Միհրան    | Պ. Սէլեան      | Ատենադպիր |
|        | Անտօն     | Բէքմէզեան      | Անդամ     |
|        | Գառնիկ    | Տէյրմէնճեան    | »         |
|        | Յարութիւն | Ն. Խուպէրեան   | »         |

Նպաստահաւաքութեան գործը Յանձնաժողովի և Օժանդակ մարմիններու կողմէ սկսու բուռն թափով մը, հայրենակիցները փոխադարձաբար իրենց նիւթական օժանդակութիւնները տեղացնելով անհախընթաց օրինակը տուած:

եղան ազգասիրական և մարդասիրական գնահատելի զոհողութիւններու : Պարձանքով կը յայտարարենք թէ՛ շահմատարար թէ՛ տեղական թէ՛ անասն սական կրկնակ տեսակէաներով ո՛չ մէկ նուիրատուութիւն այնքան գնահատելի արդիւնք տուած է որքան մեր հայրենակիցներու հետեւեալ ցուցա՛րը, զոր ստորև կ'արձանագրենք ճշմարիտ հաճոյքով :

ՆՈՒՐՈՍՏՈՒՆԵՐՈՒ ՅՈՒՅԱԿ

| Անուանք                                      | Ոսկի | Դճ | Անուանք                  | Ոսկի | Դճ |
|--|------|----|--------------------------|------|----|
| Յակոբ Ս. Այթրարմազ                           | 700  |    | Փոխադրեալ                | 6483 | 25 |
| Կարապետ Թօփուխան                             | 500  |    | Զ. և Ն. Բէլէշեան         | 100  |    |
| Պէսոն Տէյրմէնճեան                            | 500  |    | Կարապետ Ղրուչճեան        | 100  |    |
| Թաղէոս Տաղարեան                              | 250  |    | Մ. Կարապետ Պամաճեան      | 100  |    |
| Մինրան Կ. Էսէֆեան                            | 250  |    | Ղևոնդ Միննէթեան          | 100  |    |
| Մինրան Օհանեան                               | 250  |    | Ճիվան Գուրաքճեան         | 100  |    |
| Սարգիս Թէլֆեան                               | 250  |    | Միսաք Յ. Սնորրեան        | 100  |    |
| Սարգիս Ստամպոլլեան                           | 250  |    | Միսաք Մէրճիմէքեան        | 100  |    |
| Գառնիկ Տէյրմէնճեան                           | 200  |    | Յակոբ Արէլեան            | 100  |    |
| Կարապետ Ճըրճրեան                             | 200  |    | Յակոբ Ապալեան            | 100  |    |
| Մ. Կարապետ Օհանեան                           | 200  |    | Յակոբ Ռ. Գուրնեան        | 100  |    |
| Յակոբ Էթմէքճեան                              | 200  |    | Յակոբ և Օննիկ Էվրէնեան   | 100  |    |
| Մ. Յակոբ Սիլիփեան                            | 200  |    | Յակոբ Թորոսեան Էվէրէկցի  | 100  |    |
| Վահրամ Շիլիբեան                              | 200  |    | Յակոբ Թորոսեան Թալասցի   | 100  |    |
| Գրիգոր Յիւր. Սթամպոլլեան                     | 180  |    | Յակոբ Գրիգոր Ճըրճրեան    | 100  |    |
| Գալփաքեան Էթմէկճեան                          | 150  |    | Յարութիւն Սարրեան        | 100  |    |
| Գուրապետ Եփրեմեան                            | 150  |    | Մ. Յովհաննէս Սիւրեան     | 100  |    |
| Ա. Իսպէրչեան Մ. Սիւրեան                      | 150  |    | Պետրոս Բէլիվանեան        | 100  |    |
| Կարապետ Գուրապետ                             | 150  |    | Պետրոս Գաղանճեան         | 100  |    |
| ՏԿ. Հայկանոյշ Գալթաքճեան                     | 150  |    | Պետրոս Շահպետէրեան       | 100  |    |
| Մինրան Բիլաւեան                              | 150  |    | Սարգիս Բ. Բէշեան         | 100  |    |
| Յովսէփ Տէյրմէնճեան                           | 150  |    | Վահան Պէյ Մ. Էսաեան      | 100  |    |
| Նշան Տէօվլէթեան                              | 150  |    | Տիգրան Իսպէրչեան         | 100  |    |
| Պարթեւ Յակոբեան                              | 150  |    | Սարիմ Սարիմ Աւագեան      | 80   |    |
| Վարդան Ամէնճեան                              | 103  | 25 | Արրահամ Էքշեան           | 75   |    |
| (200 շատ ներքին փոխառթ. պարտաթղ. վաճառումէն) |      |    | Գրրլ. Բիրքճեան և որդիք   | 75   |    |
| Արմենակ Սանուկեան                            | 100  |    | Հայկազուն Ա. Կիւլպէնկեան | 75   |    |
| Արշակ Մընտիկեան                              | 100  |    | Ճիվան Եղուպեան           | 75   |    |
| Աւետիս Յ. Էմիրզեան                           | 100  |    | Միսաք Բանոսեան           | 60   |    |
| Բարսեղ Բէլիշեան                              | 100  |    | Յակոբ Թահթապրուսեան      | 60   |    |
| Բարսեղ Տիւրքիւրեան                           | 100  |    | Արրահամ Արէլեան          | 50   |    |
| Բէքմէզեան Եղբարք                             | 100  |    | Արամ Սէլեան              | 50   |    |
| Գրիգոր Մանուկեան                             | 100  |    | Աւետիս Կիւլպէնկեան       | 50   |    |
|  |      |    | Բենեամին Մաճարեան        | 50   |    |
| Փոխադրելի                                    | 6483 | 25 | Փոխադրելի                | 9383 | 25 |

| Անուանք                  | Ոսկի  | Դճ | Անուանք                  | Ոսկի  | Դճ |
|--------------------------|-------|----|--------------------------|-------|----|
| Փոխադրեալ                | 9383  | 25 | Փոխադրեալ                | 10128 | 25 |
| Գէորգ Յ. Սաղըրեան        | 50    |    | Լևոն Փափաղեան            | 25    |    |
| Տկն. Մ. Կիւլի Եուսուֆեան | 50    |    | Կրպ. Գէորգ Պաշլանթեան    | 25    |    |
| Մինրան Նազգաշեան         | 50    |    | Կարապետ Բէլիղեան         | 25    |    |
| Մինրան Նուրճեան          | 50    |    | Ճէպրայէլ Գասապեան        | 25    |    |
| Մինրան Սէլեան            | 50    |    | Մարտիկ Շէքէրճեան         | 25    |    |
| Միսաք Կ. Ավանըղեան       | 50    |    | Մինրան Պալթաեան          | 25    |    |
| Միրիճան Շիրինեան         | 50    |    | Մինրան Քէօրքէեան         | 25    |    |
| Յակոբ Յ. Արէլեան         | 50    |    | Միսաք Բէմրճեան           | 25    |    |
| Յակոբ Մ. Թօփուխան        | 50    |    | Յակոբ Արթինեան           | 25    |    |
| Յարութ. Խան Գայսէրեան    | 50    |    | Յակոբ Իչմէզեան           | 25    |    |
| Յարութիւն Ճ. Իրլիքճեան   | 50    |    | Յարութիւն Սինանեան       | 25    |    |
| Սովհաննէս Աչուկեան       | 50    |    | Յովհաննէս Օհանեան        | 25    |    |
| Մ. Նշան Փանոսեան         | 50    |    | Նազարէթ Պօտուրեան        | 25    |    |
| Պօղոս Իսպէրչեան          | 50    |    | Վարդան Վարդանեան         | 22    |    |
| Ռափայէլ Կարապետեան       | 50    |    | Մարգար Բէլիվանեան        | 20    |    |
| Տիգրան Թիւրապեան         | 50    |    | Արրահամ Արզուեան         | 20    |    |
| Տիգրան Մանուկեան         | 50    |    | Արամ Գամպոսոզեան         | 20    |    |
| Օննիկ Սինանեան           | 50    |    | Եղիա Ճիւճիւրեան          | 20    |    |
| Յարութիւն Չիլտէմեան      | 45    |    | Թորոս Պալքճեան           | 20    |    |
| Առաքէլ Սինանեան          | 40    |    | Կարապետ Ատիյամանեան      | 20    |    |
| Կարապետ Տէօվլէթեան       | 40    |    | Կարապետ Բասգալեան        | 20    |    |
| Մ. Կարապետ Թօփաղեան      | 40    |    | Կարապետ Բացալեան         | 20    |    |
| Յակոբ Կ. Բէլիշեան        | 40    |    | Կարապետ. Բէշլիքեան       | 20    |    |
| Յարութիւն Խիւպէսէրեան    | 40    |    | Մ. Մինաս Ստեփանեան       | 20    |    |
| Սերովրէ Եաղըճեան         | 40    |    | Յակոբ Գըրըճեան           | 20    |    |
| Կարապետ Սալլիեան         | 35    |    | Յիւր. և Արշ. Ճազմատարեան | 20    |    |
| Բարսեղ Տէմիրճեան         | 30    |    | Մ. Յրթն. Ստեփանեան       | 20    |    |
| Կարապետ Բալամոթեան       | 30    |    | Պաթիարեան Եղբարք         | 20    |    |
| Հրանտ Բաբաղեան           | 30    |    | Սարգիս Կիւմիւշեան        | 20    |    |
| Յ. Յ. Խուպէսէրեան        | 30    |    | Սեղբակ և Յրթ. Պալթաեան   | 20    |    |
| Ռուբէն Բիլաւեան          | 30    |    | Տիգրան Ապաճեան           | 20    |    |
| Մ. Անտիբիկ Յ. Վսէփեան    | 25    |    | Տօքթ. Խոստոռունի         | 20    |    |
| Արամ Իմիրեան             | 25    |    | Ատիկ Վարդուկեան          | 15    |    |
| Արամ Սինանեան            | 25    |    | Բարսեղ Տիւրքիւրեան       | 15    |    |
| Արմենակ Շէքէրճեան        | 25    |    | Բարսեղ Գուրնուրեան       | 15    |    |
| Գառնիկ Փանոսեան          | 25    |    | Բարսեղ Չէքէքեան          | 15    |    |
| Գէորգ Գալայճեան          | 25    |    | Գրիգոր Պարսամեան         | 15    |    |
| Գրիգոր Բէլէքեան          | 25    |    | Թորոս Եսայեան            | 15    |    |
|                          |       |    | Թորոս Պարսամեան          | 15    |    |
| Փոխադրելի                | 10928 | 25 | Փոխադրելի                | 11745 | 25 |

| Անուանք                 | Ոսկի  | Դհ | Անուանք               | Ոսկի  | Դհ |
|-------------------------|-------|----|-----------------------|-------|----|
| Փոխադրեալ               | 11745 | 25 | Փոխադրեալ             | 12145 | 25 |
| Կարապետ Թէլլիւն         | 15    |    | Սարգիս Տէօքմէճեան     | 10    |    |
| Մարտիրոս Հալանեան       | 15    |    | Տիգրան Թօփաքեան       | 10    |    |
| Յարութիւն Քէչիշեան      | 15    |    | Տօքթ. Արզուեան        | 10    |    |
| Յովհաննէս Դերձակեան     | 15    |    | Տօքթ. Սեղրաք Քէլէշեան | 10    |    |
| Սարգիս Տիւրպեան Որդիք   | 15    |    | Բերովթէ Պալզգճեան     | 10    |    |
| Վահան Իսպէշերեան        | 15    |    | Ռարիկ Քէրէճեան        | 8     |    |
| Արամ Ժամկոչեան          | 10    |    | Երուանդ Սաղըրեան      | 7     | 50 |
| Յար. և Սաչիկ Թազուրեան  | 10    |    | Թորոս Շչնեան          | 7     | 50 |
| Բարոնդ Տամբաճեան        | 10    |    | Լեւոն Նշանեան         | 7     | 50 |
| Բարսեղ Քէօշկերեան       | 10    |    | Կարապետ Ճամուզեան     | 7     | 50 |
| Դառնիկ Ղրուշճեան        | 10    |    | Ճիվան Թէլլիւն         | 7     | 50 |
| Դէորդ Ղրուշճեան         | 10    |    | Յովհաննէս Կէվրէկեան   | 7     | 50 |
| Գրիգոր Ժամկոչեան        | 10    |    | Յարութիւն Թաձաճեան    | 6     |    |
| Դանիէլ Պուտակեան        | 10    |    | Աբիկ Գալֆաեան         | 5     |    |
| Լեւոն Ճօտիբան           | 10    |    | Արրահամ Տէմիրճեան     | 5     |    |
| Խաչատուր Գոյլոժճեան     | 10    |    | Մ. Աւետիս Պողոտեան    | 5     |    |
| Կարապետ Բամուզճեան      | 10    |    | Աւետիս Սաղըրեան       | 5     |    |
| Կարապետ Աւետիսեան       | 10    |    | Անդրանիկ Շիշմանեան    | 5     |    |
| Կարապետ Պարսամբան       | 10    |    | Բենիամին Արզուեան     | 5     |    |
| Կարապետ Քէչիշեան        | 10    |    | Դառնիկ Ալպաճեան       | 5     |    |
| Մանաս Դարազաշեան        | 10    |    | Գէորդ Թաթարեան        | 5     |    |
| Մարտիրոս Պուտաքճեան     | 10    |    | Գէորդ Թումանեան       | 5     |    |
| Յկր. և Երթ. Արմաղանեան  | 10    |    | Դանիէլ Չէրքէզեան      | 5     |    |
| Յկր. Սախաճեան           | 10    |    | Լուծֆիկ Կէօղիւճեան    | 5     |    |
| Յակոբ. Ճընկարորեան      | 10    |    | Կարապետ Հայաճեան      | 5     |    |
| Յարութիւն Ալպամեան      | 10    |    | » Պօճէշեան            | 5     |    |
| Յարութիւն Կիւլպէնկեան   | 10    |    | Կարապետ Սաղըրեան      | 5     |    |
| Յարութիւն Մըղորսեան     | 10    |    | Ճիվան Արրհ. Արսլանեան | 5     |    |
| Յարութիւն Նեֆեսն        | 10    |    | Մանուկ Թասլաքճեան     | 5     |    |
| Յարութիւն Տավուտեան     | 10    |    | Մամաս Պալթաճեան       | 5     |    |
| Յովակիմ Կիւլլէրեան      | 10    |    | Մանուկ Մուշտեան       | 5     |    |
| Յովհ. Թալանճեան         | 10    |    | Մարտիրոս Թանթապրնն.   | 5     |    |
| Յովհաննէս Կիւլպէնկեան   | 10    |    | Մելքոն Դերձակեան      | 5     |    |
| Յովհաննէս Օհանեան       | 10    |    | Յակոբ Ատիլեան         | 5     |    |
| Տիկին Նուրիցա Չիլտէմիան | 10    |    | Յակոբ Բօթուզեան       | 5     |    |
| Սարգիս Բիււեան          | 10    |    | Յակոբ Թումանեան       | 5     |    |
| Սարգիս Չօլաքեան         | 10    |    | Յակոբ Իսպէնչեան       | 5     |    |
|                         |       |    | Յակոբ Ճգնաւորեար      | 5     |    |
| Փոխադրեալ               | 12145 | 25 | Փոխադրեալ             | 12379 | 25 |

| Անուանք  | Ոսկի  | Դհ | Անուանք               | Ոսկի  | Դհ |
|--|-------|----|-----------------------|-------|----|
| Փոխադրեալ  | 12379 | 25 | Փոխադրեալ             | 12497 | 25 |
| Յակոբ Պաշտէլէնեան  | 5     |    | Սեղրակ Պալթաճեան      | 3     |    |
| Յարութիւն Ինճիրճեան  | 5     |    | Մ. Ստեփան Փանոսեան    | 3     |    |
| Յարութիւն Միքայէլեան   | 5     |    | Աւաղ Քէօրօղլուեան     | 2     | 50 |
| Յովակիմ Գայլըճեան  | 5     |    | Ստեփան Չիլիկիրեան     | 2     | 50 |
| Յովհաննէս Սաղրբեան   | 5     |    | Արրահամ Պարսամբան     | 2     |    |
| » Ստեփանեան  | 5     |    | Աստիկ Թալաճեան        | 2     |    |
| Մ. Նշան Աճէլէեան   | 5     |    | Գրիգոր Նշանեան        | 2     |    |
| Պողոս Յակոբեան   | 5     |    | Կարապետ Ճիվէլէկեան    | 2     |    |
| Ռուբէն Քէօրքէեան   | 5     |    | Մատթէոս Բէքմէզեան     | 2     |    |
| Ռօպէնոս Սիւլեան  | 5     |    | Մինրան Մարտիրոսեան    | 2     |    |
| Սահակ Նազըճեան   | 5     |    | Մելգօն Գալֆաճեան      | 2     |    |
| Սարգիս Թարխանեան   | 5     |    | Մինրան Կիւլանեան      | 2     |    |
| Սարգիս Քէլլէճեան   | 5     |    | Յակոբ Աւետիսեան       | 2     |    |
| Սարգիս Քէշեան  | 5     |    | Յակոբ Կէրէքմէզեան     | 2     |    |
| Օննիկ Մէրտինեան  | 5     |    | Յարութիւն Գուղուճեան  | 2     |    |
| Սիքայէլ Ճարուզեան  | 5     |    | Յովհաննէս Գամպարրզեան | 2     |    |
| Սաչիկ Գուղուճեան   | 4     |    | Սարգիս Տէմիրճեան      | 2     |    |
| Մ. Մկրտիչ Քէշիպաշեան   | 4     |    | Վարդան Գալֆաճեան      | 2     |    |
| Յարութիւն Ուղուրեան  | 4     |    | Միսաք Գամպարրզեան     | 1     | 50 |
| Ռուբէն Քէչիշեան  | 4     |    | Գէորդ Քիլիմեան        | 1     | 50 |
| Սղիա Ետիգարտաշեան  | 4     |    | Մինրան Գալֆաճեան      | 1     | 50 |
| Արտաշէս Վարդուկեան   | 3     |    | Յրթ. Իսկէնտէրեան      | 1     | 50 |
| Գրիգոր Պացանեան  | 3     |    | Բարսեղ Մէրասէտեան     | 50    |    |
| Լեւոն Գաբաթլանեան  | 3     |    | Երուանդ Պապմաճեան     | 50    |    |
| Լեւոն Թօմարզալեան  | 3     |    | Թորոս Ալպաճաճեան      | 50    |    |
| Մ. Կարապետ Դերձակեան   | 3     |    | Յովհաննէս Վարդուկեան  | 50    |    |
| Նշան Պըշաքճեան   | 3     |    | Երկու անձերէ          | 1     | 50 |
| Փոխադրեալ  | 12497 |    | Գումար                | 12544 | 25 |
| 1. Եգիպտոսի Հայ Ազգ. Միութիւն 500 եգիպ. թղթադրամ   |       |    |                       | 2030  |    |
| 2. Իգմիրի մասնաճիւղին զրկած գումարը  |       |    |                       | 1650  |    |
| 3. Ճիլիպէէն Տարաքրեւոյ Կեդրոնական Յանձնաժողովէն  |       |    |                       | 1584  | 26 |
| 4. Արթաքի Գալֆաճեանէ   |       |    |                       | 400   |    |
| 5. Տիւրիզ Չառլէն (Մ. Քէօրէիւն ձեռամբ)  |       |    |                       | 50    |    |
| 6. Անուր անձանօթ Հրեայէ մը (Տօքթ. Արզուճանի ձեռամբ)  |       |    |                       | 27    | 50 |
| 7. Հրեայ Պէնտեանէն (Աղրիանապօլսէն Ճընտրգեանի ձեռամբ)   |       |    |                       | 25    |    |
| 8. Բընէ Գահիէ Շաթրըօնէ Քէօսէլէի գործարանէն անձանօթ անձերէ (Յակոբ էֆ. Ալթըրարմազեանի միջոցաւ) |       |    |                       | 17    | 50 |
| 9. Եօրկի Մուրատ Օղլուէ   |       |    |                       | 5     |    |
| 10. Յակոբ Արթիւնեան 10 հատ ֆանելա, շապիկ   |       |    |                       |       |    |
| Գումար Օսլ. Ոսկի   |       |    |                       | 5789  | 26 |

Վերոգրեալ ցուցակէն ինչպէս կարելի է հետեւցնել, կարգ մը անձերու ճշգրիտ բացառութենէն զատ, մեր հայրենակիցներու անձնիւրը իր նիւթական կարողութեան չափով գնահատելի սօսողակութիւնը բերած է ի սպաս տառապեալ հայրենակիցներու, որուն հանդէպ Յանձնաժողովիս կը մնայ միայն իր խորին երախտագիտութիւնն ու շնորհակալիքը յայտնել:

### ԿԵՍԱՐԻՈՅ ՀԱՅՎ ՈՐԲԱՆՈՅՑ

Մեր մասնաճիւղերու գործունէութիւնը ամեն գնահատութենէ վեր է. հետզհետէ բարգաւազ անսահման կարիքին սուշեւ, մանաւանդ տեղական աննպաստ պայմաններու տակ գերիվեր ջանքերու պէտքը ղգալով մխիթարական է տեսնել թէ, անոնք հակառակ կարգ մը պարադաններու պարտադրած թելութիւններուն, ունեցած են ժամանակին յարմար արդիւնաւոր աշխատանք՝ պսակուած գոհացուցիչ արգասիքներով:

Սակայն նկատի ունենալով թէ, աժան գործառնութեանց, նպաստաբաշխութեանց և զարմանումը կեդրոնը կեսարիա է, մենք հոս պիտի ծանրանանք նոյն տեղոյ Մասնաճիւղի գործունէութեան և ընդհ. արդիւնքին վրայ:

(Միայն փակադժի մէջ պարտք կը համարենք հաճոյքով յիշատակել թէ՛ Էվէրէկ-Ֆէնէսէի մասնաճիւղի նախաձեռնութեամբ, հակառակ տեղական ժողովուրդի անձուկ և փճացած անտեսականին՝ տեղւոյն վրայ հանգանակուած է 300 ոսկիի գումար մը և բաշխուած կարօտ դասակարգին: Ասկէ զատ գոհութեամբ պէտք է յիշել թէ՛ կեսարիոյ բոլոր առարձաններու մէջ, մինչև յետին գիւղի ազգայինները, անձնուր ոք իւր կարողութեան չափով չէ զւարացած իր աշխատութեան բաժինը բերել կեսարիոյ Մասնաճիւղի գործառնութեան՝ իսպաս շրջանակներու կարօտեալներու):

Կեսարիոյ Մասնաճիւղը, գոհութեամբ կը շնորհակալ լինի իր պարտականութեան բարձրութեանը վրայ մնաց, դէմ դնելով վնասեցուցիչ դժուարութիւններու և իր նիւթականի ներած չափով առաջադրուած նպատակը հետապնդելով՝ ոգի ի բռին, առանց ընկրկելու մանաւանդ որքերու անսպասելի յարաճումին առջև, որ իր անսահման կարիքներով կուզար վերիվայր շրջելու յանձնաժողովին կողմէ նախապէս ծրագրուած բարոյական թէ անտեսական ամեն ձեռնարկ:

Որբանոցին հիմը, ուրևմն որբերը, իրենք դրին և տեղւոյն Մասնաճիւղը կատարուած իրողութեան և ներկայացուած պէտքին առջև առանց դեղեւելու, զանոնք խնամելու ձեռնարկեց անմիջապէս և իր աշխատանքը կեդրոնացուց նախ որբերը խնամելու դօրծին, չի մոռնալով իր կարգին թէ Ա. և թէ Բ. Շրջանակներու ամենափոքրիկ գիւղին իսկ 3416 կարօտեալներու մաս առ մաս նիւթական նպաստներ հասցնել իւրաքանչիւր ընտանիքի թուոյն և կարօտութեան համաձայն:

Յանձնաժողովիս հասցէին ուղարկուած Որբանոցի Տեղեկագիրները, ու

րոնք կը բաղկանան Ա. Ուտեստեղէնի և վառելանիւթի պարբերական ցուցակներէ, որոնց մէջ յատկանշանական է Որբանոցին բժիշկին գիտական հիմերու վրայ պատրաստած սննդառութեան բաժանումը. Բ. Որբանոցին տասնեակնգորեայ ընդհ. տեղեկագիրներէ, որոնց մէջ կանոնաւորապէս կը յիշուին պատասպարեալներու, պաշտօնեաներու, փախստականներու, մահերու, փոխադրուածներու, փոփոխեալներու թիւերը, այն հաստատ համոզումը կուտան մեզի թէ՛ ի ձեռին ունեցած անձուկ միջոցներով Մասնաճիւղէն ասկէ աւելի արդիւնք սպասելը անտրամաբանական պիտի ըլլար:

Ասոր իբր համոզիչ փաստ՝ ստորև կը դնենք ուտեստեղէնի և վառելանիւթի առօրեայ ցուցակներէն, տասնեակնգորեայ տեղեկագիրներէն մէյմէկ նմոյշ և եռամսեայ ամբողջ Տեղեկագիրը:



ԿԵՍԱՐԻՈՅ ՀԱՅԿ ՈՐԲԱՆՈՅԻ 1 ՅՆՎ. 919 — 1 ԱՊՐԷԼ 919  
ԳՈՌԱՄՍԵԱՅ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

|                         |            |                         |           |            |
|-------------------------|------------|-------------------------|-----------|------------|
| 1919                    | Մոսխ       | Մահ                     | 17        |            |
|                         | Անձինք     | 1 Փտ. 28 փտ. բժշկուածն. | 117       |            |
| 1 Յնվր. — 1 Փետր. Մուտք | 362        | Մահ                     | 13        |            |
| 1 Փետր. — 1 Մարտ »      | 203        | 1 Մտ. 31 Մտ. բժշկուածն. | 143       |            |
| 1 Մարտ — 1 Ապրիլ »      | 209        | Մահ                     | 5         |            |
|                         | <u>774</u> |                         | <u>35</u> | <u>438</u> |

Ելք

1 Յնվ. — 1 Ապրիլ 1919

|                        |            |
|------------------------|------------|
|                        | Անձինք     |
| Ծնողքին վերադարձուած   | 109        |
| Որդեգիր տրուած         | 5          |
| Ծննդավայրը ուղղարկուած | 31         |
| Մահ                    | 35         |
| Ամուսնացած             | 1          |
| Փախստականներ           | 20         |
|                        | <u>201</u> |

|      |            |
|------|------------|
| Մոսխ | 774        |
| Ելք  | 201        |
|      | <u>573</u> |

|                                |            |
|--------------------------------|------------|
| 1 Ապրիլ 919ի ներկանեու վայրերը |            |
| Կեսարիոյ և շրջակայքէն          | 250        |
| Շօզկատ » »                     | 150        |
| Սիբաստիա » »                   | 135        |
| Չանազան վայրերէ                | 30         |
| Պաշտօնեայք                     | 8          |
|                                | <u>573</u> |

Մահացուցակ

Յնվ. 1 — 31 Յնվ. Հիւանդանոց մտած և բժշկուածներու թիւը 178

919 Յնվ. 1 — Ապրիլ 1 հիւանդանոցի պատուարեալներու թիւը 438 ըլլալով 35 հոգիի մահուամբ՝ մնացեալ թիւը կը ներկայացնէ 403 հոգի:

Ներկայիս Հիւանդանոցին

|                           |            |
|---------------------------|------------|
| մեջ պատասպարեալներու թիւը |            |
| Հիւանդանոցին մէջ          | 28         |
| Փորհարութեան սենեակի      | 10         |
| Բորտութեան ց »            | 185        |
|                           | <u>223</u> |

Ապրիլ 1ին հիւանդանոցի ընդհ. պատասպարեալներու թիւն և 223.

Վճարեալ պաշտօնեաներ

|                       |             |
|-----------------------|-------------|
| 1 Տնօրէն ամսաթուակ    | 1500        |
| 1 Բարտիւղար մանճղի. » | 1000        |
| 1 Հսկող »             | 800         |
| 1 Մատակարար »         | 600         |
| 1 Օգնական հսկող »     | 100         |
| 1 * * *               | 600         |
| 1 * * *               | 600         |
| 1 Օգնական քարտուղար » | ...         |
| 1 Փռակատ »            | 250         |
| Գումար Ամսաթոշակի     | <u>5350</u> |

Անվճար պաշտօնեաներ

|                               |    |  |                 |
|-------------------------------|----|--|-----------------|
|                               | 1  | »  | Գրասենեակի      |
| 1 Դիւանօր քոյր                | 21 | Գումար 21 կանթեղ, որոնց մէջ օրական մեկ ֆիջօ մէք կը վառի: |                 |
| 3 » » ի օգնական               |    | 1 Խոհանոց  |                 |
| 24 Մանկա քոյրեր               |    | 1 Բանիք  |                 |
| 3 Խոհարարուհի                 |    | 1 Հակահետարան  |                 |
| 5 Լուացրհի. և բաղնեկան քոյրեր | 3  | Գումար, երեք մասերու համար օրական 250 ֆիջօ փայտ կ'սպառի. |                 |
| 8 Խմոր թրող և արդուկող քոյրեր |    | 1 4/1919   |                 |
| 10 * * *                      |    | Ընդհ. Հսկող  | Տնօրէն Որբանոցի |
| 10 Հիւանդապահուհի և սպասուհի  |    | Օ. Ներկիճեան   | ձ. Յ. ԱՇԸԳԵԱՆ   |
| 64                            |    |  |                 |

Լուսավառութեան յաճուկ

|                       |  |
|-----------------------|--|
| 10 Լամպար հիւանդանոցի |  |
| 3 » ձեմիշներու        |  |
| 3 » խոհանոցի          |  |
| 4 » ննջասենեակի       |  |

Վերագրեալ ցուցակի ստուգուած թիւը վաւերացնելով Կ. Պոլսոյ Յանձնաժողովին կը յղուի ի գիտութիւն: Կոստանդուպոլիսի Մասնաճիւղի Բ. Ատենադպիր Ա. Ատենապետ ԲԵՆ. ԳՐԸԸԵԱՆ ՏՕԲ. Ս. ԳԱԼԹԱԳՃԵԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԵՐՈԳՐԵԱԼ ՅՈՒՅԱԿՆԵՐՈՒ ՎՐԱՅ

1. Ուտեստեղէնի և վառելանիւթի ցուցակներու մէջ մասնագէտներու ցուցմունքին վրայ, փայտի սպառումը թէպէտև քիչ մը ոչ-լինսյողական նշմարուած է, սակայն Ուրբանոցին մէջ հաստատուած հակահետարանին և բաղնիքի տեղեկագրութիւնը լուսաբանելու կը ծառայէ այդ կէտը:
2. Սթաթիսթիքի Մարտ 15ի ցուցակին մէջ 57 չափահաս պատասպարեալներու այլուր փոխադրութիւնը կատարուած է հարկեցուցիչ պատճառներով:
3. Ինչպէս ցուցակներու մէջ կը տեսնուի, բորտութիւնը Որբանոցի յարկին տակ հետզհետէ ծաւալ գտած է. ասոր պատճառը ճերմակեղէնի և արտաքին հագուստներու անմիջական հայթայթման դժուարութիւնը եղած է. արագօրէն ծաւալող այս փոխանցիկ ախտին առաջը առնելու համար Յանձնաժողովս ժամանակին ճամբայ հանած է 15 հ.կ ճերմակեղէն, բաւականաչափ օճառ, դեղորայք, մաս մը արտաքին հագուստներ և երակի (նալլն) կաշի. (ուշագրաւ է այս կէտը թէ, հարիւրաւոր որբերու ամեն պիտոյքներու մէջ կօշիկ հայթայթել զրեթէ անկարելի ըլլալով, հարկադրուած էին անոնց ոտքերը պահել փայտեայ սանտալներու մէջ):
4. Մասնաճիւղերէն հասած տեղեկագրներէ ո՛չ մէկուն մէջ դաստիար.

րակութեան գործին մէջ խօսուած չլլալը բնականաբար անձնիւր հայրենա-  
կիցի ուշը կը գրաւէ, սակայն պատասպարութեան և սնունդի կարիքը առաջին  
գծին վրայ գտնուելով՝ կրթական գործը ժամանակ մը յետաձգելու ստիպողան-  
կան հարկին տակ գտնուած էինք. թող թէ վերջերս սրբէն մաս մը գրքեր  
և դպրոցական պիտոյքներ ճամբայ հանուեցան և կը յուսանք մօտ օրէն վար-  
ժարանի բացուածը ողջունել մեր սիրեցեալ Որբանոցի մէջ՝ ուսումնասիրան-  
խեղճուկներուն մտնորական պէտքին ալ գոհացում տալու համար:

5. Վերոգրեալ երեք ցուցակներուն և պատասպարեալներու անուննա-  
ցանկի թիւերուն միջև տեսնուած տարբերութիւնը՝ իւրաքանչիւրին անջատ  
թուականներու մէջ պատրաստուած ըլլալու հետեւանքն է:

Հոս կը դնենք Կեսարիոյ Հայկ. Որբանոցին մէջ այժմ պատասպարուող  
որբերու անունանցանկը, նշանակելով միանգամայն իրենց ծննդավայրը, ա-  
նունը, մականունը, հօրանունը և տարիքը. և իրենց կորուստը ինտուելու  
վրայ եզոզ դժբաղդ ծնողքներու ի՛ դիւրութիւն՝ պատշաճ դատեցինք անուա-  
նացանկը կազմել այրուբենական կարգով՝ չի մոռնալով իրենց ծննդավայրերու  
անուններն ալ անջատօրէն արձանագրել դարձեալ նոյն կարգով:

ԿԵՍԱՐԻՈՅ ՀԱՅԿ. ՈՐԲԱՆՈՅԻ ՊԱՏՍՊԱՐԵԱԼՆԵՐՈՒ ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿԸ

|           |  | 1. ԱՄԱՍԻԱ           |               |       |
|-----------|--|---------------------|---------------|-------|
| Անուն     |  | Մականուն            | Հայրանուն     | Տարիք |
| Գոհարիկ   |  | Ճէփտեան             | Մկրտիչ        | 10    |
| Նուարգ    |  | Գույուժեան          | Յարութիւն     | 11    |
|           |  | 2. ԱՏԱՆՍ            |               |       |
| Կիւլիւզար |  | Զուռնաճեան          | Դրիգոր        | 13    |
|           |  | 3. ԳԸՐՇԷՀԻՐ (ՔԷՄԻՐ) |               |       |
| Կիւլիւզար |  | Թէրզեան             | Գէորգ (քոյր)  | 25    |
|           |  | 4. ԵՕՁԿԱՏ           |               |       |
| Կիւլզըզ   |  | Գէորգեան            | Գրիգոր        | 8     |
| Մարիամ    |  | Յարութիւնեան        | Սիմօն (քոյր)  | 18    |
| Վերթայիմ  |  | Պատիկեան            | Վահան         | 8     |
| Վերծին    |  | Իիլաւեան            | Մանուկ        | 15    |
| Յարութիւն |  | Փափաղեան            | Եղեկիէլ       | —     |
| Նովէլ     |  | »                   | »             | —     |
| Պենոն     |  | Թաթարեան            | Արիստղոս      | —     |
| Մարիամ    |  | Հաճընիւս            | Հաճի          | 10    |
| Աննա      |  | Քէշիշեան            | Համբարձում    | 14    |
| Արմենուհի |  | Պօտօգրիգորեան       | Գրիգոր        | 13    |
| Բենիամին  |  | Մանուկեան           | Յակօբ         | 12    |
| Գրիգոր    |  | »                   | »             | 13    |
| Եսթեր     |  | Բասգալեան           | Գալուստ       | 15    |
| Զատիկ     |  | Գուժաշեան           | Իսկէնտէր      | 12    |
| Լեւոն     |  | Գուժաշեան           | Յարութիւն     | —     |
| Կիւլիւզար |  | Քէհեաեան            | Պետրոս (քոյր) | 30    |
| Մանուկ    |  | Դուժալեան           | Յարութիւն     | —     |
| Մարթա     |  | Պէղիբեան            | Ղազար         | 10    |
| Յարութիւն |  | Տալգրանեան          | Ալեքսան       | 9     |
| Նայինկիւլ |  | Զիֆթեան             | Յարութիւն     | 12    |
| Անազըզ    |  | Ազճաեան             | Աղճա          | 12    |
| Անդրանիկ  |  | Խունկանեան          | Արշակ         | 13    |
| Մարիամ    |  | Գասպարեան           | Գասպար        | 13    |
| Ռեդրանիկ  |  | Մանուկեան           | Յովհաննէս     | 12    |
| Արամ      |  | Մարտիրոսեան         | Մարտիրոս      | 8     |
| Եզիկիէլ   |  | Մուրատեան           | Թորոս         | 9     |
| Եւա       |  | Մանուկեան           | Մանուկ        | 10    |
| Կարապետ   |  | Փափաղեան            | Յովհաննէս     | 12    |
| Հնազանդ   |  | Պէրպէրեան           | Համբարձում    | 8     |
| Սաթենիկ   |  | —                   | —             | 6     |
| Կարապետ   |  | Հէթիմեան            | —             | —     |
| Մարգիս    |  | Հէթիմեան            | —             | —     |
| Գեղամ     |  | Իբրանոսեան          | Իբրանոս       | 8     |
| Պայծառ    |  | Զատիկեան            | Զատիկ         | 10    |
| Եւա       |  | Յակօբեան            | Գալուստ       | 9     |
| Հայկանոյշ |  | Նիկողոսեան          | Հայրապետ      | 13    |

Գարախալիկ . —  
Ելիեննէ . —

Իյսէկի . —  
Կիւրսեան . —

Մեհրեշի . —

Ուզունչու . —

Չազնագ . —

Չաթ . —

Չեփի . —

| անուն         | մականուն  | հայրանուն    | սարիք      |    |
|---------------|-----------|--------------|------------|----|
| Պեղեորեան . — | Արեգնազ   | Վճէմեան      | Մամաս      | 8  |
|               | Գալուստ   | »            | »          | 11 |
| Պրուկզըշա     | Կարապետ   | Քէօսէկան     | Գասպար     | 10 |
|               | Կիւլիզօր  | Թէքիրեան     | Կարապետ    | 12 |
|               | Ովսաննա   | Ալթունեան    | Մանուկ     | 13 |
|               | Սիրանոյշ  | Սահակեան     | Գէորգ      | 12 |
|               | Վեհանոյշ  | »            | »          | 8  |
| Պոլազաւեան    | Գրիգոր    | Վարդանեան    | Կարապետ    | 13 |
|               | Մկրտիչ    | »            | Ալեքսան    | 12 |
|               | Յովհաննէս | Եայլաեան     | Կարապետ    | 12 |
|               | Սարգիս    | »            | »          | 5  |
| Տեւսիլ . —    | Թորոս     | Գասաֆէթեան   | Ստեփան     | 8  |
|               | Կարապետ   | Օհանեան      | Խաչատուր   | 12 |
|               | Սարգիս    | Գասաֆէթեան   | Յակոբ      | 11 |
| Րուսիկի . —   | Արմէն     | Օհանեան      | Կարապետ    | 7  |
|               | Անուշ     | Գայսէրեան    | Մանուկ     | 10 |
|               | Արշալոյս  | Նորտիկեան    | Մանուկ     | 8  |
|               | Արշակունի | Գուրթեան     | Գրիգոր     | 9  |
|               | Արշակունի | Սողոմոնեան   | Պապօ       | 12 |
|               | Արսէն     | Սուպաշեան    | Նազար      | 4  |
|               | Բերուզ    | Գայսէրեան    | Տիգրան     | 13 |
|               | Գլխաղիբ   | Էփրեան       | Յարութիւն  | 11 |
|               | Գրիգոր    | Գուրճեան     | Աղամ       | 12 |
|               | Կղիսարիթ  | Սուպաշեան    | Սերովբէ    | 10 |
|               | Եսթեր     | Տէմիրճեան    | Խաչատուր   | 13 |
|               | Զուարթ    | Սրլարեան     | Համբարձում | 13 |
|               | Լուսաբեր  | Դաթոսեան     | Գրիգոր     | 10 |
|               | Լուսաբեր  | Տէյրմէնճեան  | Աղամ       | 10 |
|               | Կիւլզըզ   | Թըսպորուկեան | Պապիկ      | 12 |
|               | Կիւլզէնկ  | Գարրիէլեան   | Աւետիս     | 6  |
|               | Կիւլզէնկ  | Տէյրմէնճեան  | Կարապետ    | 11 |
|               | Հայկ      | Արմէնեան     | Արմէն      | 13 |
|               | Հայկ      | Քէլէշեան     | Սահակ      | 10 |
|               | Հայկանոյշ | Աղատեան      | Յակոբ      | —  |
|               | Հայրապետ  | Ճիւլբեան     | Յարութիւն  | 9  |
|               | Հայրապետ  | Շէրիտեան     | —          | 11 |
|               | Ղազար     | Սրլարեան     | Յովհաննէս  | 10 |
|               | Մայրենէ   | Գրիգորեան    | Գրիգոր     | 8  |
|               | Մայրենէ   | Գօճահեան     | Յակոբ      | 14 |
|               | Մանսիկ    | Շահինեան     | Մարտիրոս   | 12 |
|               | Մարիամ    | Մանուկեան    | Կտրապետ    | 11 |
|               | Մարիամ    | Սուպաշեան    | Սերովբէ    | 11 |
|               | Մարտիրոս  | Գօճահեան     | Աւագ       | 11 |
|               | Մինրան    | Գարրիէլեան   | Մարկարոս   | 14 |
|               | Մինաս     | Յովհաննէսեան | Յարութիւն  | 7  |
|               | Յակոբ     | Ապպասեան     | Մկրտիչ     | 11 |
|               | Յակոբ     | Գալէնտէրեան  | Խաչիբ      | 6  |
|               | Յակոբ     | Արլարեան     | Յովհաննէս  | 11 |

| անուն          | մականուն   | հայրանուն          | սարիք        |    |
|----------------|------------|--------------------|--------------|----|
|                | Նարինիիւլ  | Սէթեան             | Յարութիւն    | 15 |
